

ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ  
ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

**Միսակ Արմոյի Ավագյան**

տնտ. թ., դոցենտ

ՀԵՀ, Կառավարման ամբիոն

[misakav@rambler.ru](mailto:misakav@rambler.ru)

**Ամփոփագիր**

Միջազգայնացման ներկայիս միտումները, որոնք հանգեցնում են գլոբալացման և տարածաշրջանային ինտեգրման գործընթացների ակտիվացմանը, խթանում են թե՛ զարգացած, թե՛ զարգացող երկրների տնտեսությունների բացության և համաշխարհային մրցունակության աճը: Արդյունքում երկրների միջև տնտեսական փոխհարաբերությունները զարգանում են ավելի մեծ դինամիկ տեմպերով՝ նպաստելով երկրների միջև տարածաշրջանային տնտեսական ինտեգրման հետագա խորացմանը, ընդհուպ անցմանը վերջինիս բարձրագույն փուլին՝ արժութային ինտեգրմանը, որի դրսևորման ձևերից է արժութային միությունը: Հաշվի առնելով միջազգային արժութաֆինանսական հարաբերություններում երկրների միջև արժութային ինտեգրման, հատկապես արժութային միությունների կարևոր դերն ու ազդեցությունը համաշխարհային տնտեսության զարգացման և մասնակից երկրների միջազգային մրցունակության մակարդակի աճի վրա՝ հողվածում ներկայացվել են դրանց ձևավորման հիմնական առանձնահատկությունները, դրսևորման ձևերը, նախադրյալներն ու ազդեցությունը երկրների տնտեսական զարգացման վրա: Առաջ են քաշվել արժութային միությունների ստեղծման համար անհրաժեշտ հիմնական պայմանները:

**Հիմնաբառեր.** արժութային ինտեգրում, արժութային միություն, արժութային փոխարժեք, միասնական արժույթ, արժութաֆինանսական հարաբերություններ, արժութային անկախություն:

**Ներածություն**

Արժութային միությունը հանդիսանում է տարածաշրջանային տնտեսական ինտեգրման բարձրագույն փուլը, որի ձևավորումը պայմանավորված է ինտեգրացիոն խմբավորման մասնակից երկրների միջև տնտեսական հարաբերությունների փոխսերտաճման և փոխկապակցվածության բարձր մակարդակով, ինչպես նաև տնտեսական ինտեգրման նախորդ փուլերով (ազատ առևտրի գոտի, մաքսային միությունում ընդհանուր շուկա, տնտեսական միություն) նախատեսված հա-

մագործակցության հիմնական ձևերի ամբողջական և արդյունավետ գործունեությամբ: Հանդիսանալով ժամանակակից աշխարհի զարգացման առանձնահատկություններից մեկը՝ տարածաշրջանային արժութային ինտեգրումը դարձել է ոչ միայն ինտեգրվող երկրների տնտեսական կայունության և աճի ապահովման, այլև հատկապես վերջին ժամանակաշրջանում պարբերաբար ի հայտ եկող ճգնաժամային մարտահրավերներին ինտեգրացիոն փոխհամագործակցության շրջանակներում դիմակայելու միջոց: Այս հա-

մատեքստում կարևորվում է արժույթային միությունների դերի ու նշանակության, ինչպես նաև դրանց ձևավորման առանձնահատկությունների ներկայացումը, ինչն էլ ընկած է սույն հոդվածի արդիականության հիմքում:

Ուսումնասիրության նպատակն է վերլուծել արժույթային միությունների ձևավորման վերաբերյալ տարբեր տեսաբանների կողմից մատնանշված սկզբունքներն ու հիմնադրույթները և դրանց հիման վրա բացահայտել արժույթային միությունների տարբեր ձևերի առանձնահատկություններն ու ստեղծման նպատակահարմարությունը:

Հետազոտության օբյեկտն է արժույթային ինտեգրման հայեցակարգային մոտեցումներն ու հիմնադրույթները, առարկան՝ դրանց համեմատական վերլուծությունը և արժույթային միությունների ձևավորման հիմնախնդիրները:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են տեսական վերլուծության, համադրման և ընդհանրացման մեթոդները:

Արժույթային միության վերաբերյալ մոտեցումները բազմազան են, որոնք հիմնականում փոխլրացնում են միմյանց: Այսպես, Ջ. Թավլասը արժույթային միությունը սահմանում է որպես դրա մասնակից երկրների միջև մեկ կամ մի քանի առանձին արժույթների ընդունում հետևյալ փոխարժեքային կարգավորումներով՝

1. պարիտետային դրույքաչափերի անվերադարձ ֆիքսում,
2. փոխարժեքների միջև տատանումների սահմանների վերացում,
3. արժույթների ամբողջական և անշրջելի փոխարկելիություն (արժույթային վերահսկողության բացակայություն),
4. ընթացիկ և կապիտալ գործարքների ամբողջական ազատականացում [Tavlas, 32]:

Ըստ մեկ այլ մոտեցման՝ արժույթային միությունը արժույթաֆինանսական ինտեգրման վերջին փուլն է և իրենից ներկայացնում է իրավաբանորեն ձևավորված միջպետական միավորում, որի շրջանակներում շրջանառվում է միասնական արժույթ, իսկ կառավարման ֆինանսական լծակները վերահսկվում են վերպետական ինստիտուտների կողմից [Слипченко, 8]:

Արժույթային միությունը, որը հանդիսանում է տնտեսական ինտեգրման բարձրագույն ձևը, ենթադրում է միասնական տարածաշրջանային արժույթային համակարգի ստեղծում, որն իրենից ներկայացնում է միջազգային արժույթաֆինանսական հարաբերությունների կազմակերպման ձև՝ ամրագրված միության մասնակից երկրների միջև կնքված միջազգային համաձայնագրերով: Ըստ այդմ՝ արժույթային միությունը կարող է նախատեսել.

- միասնական բազային տարածաշրջանային արժույթի ներդրում,
- միության մասնակից երկրների միասնական արժույթային տարածքի ձևավորում,
- տարածաշրջանային պահուստային արժույթով իրականացվող գործարքները սպասարկող և միության անդամ երկրների միջազգային արժույթային իրացվելիության կարգավորումն իրականացնող տարածաշրջանային ինստիտուցիոնալ համակարգի ստեղծում,
- հաշվարկների տարածաշրջանային միավորված ձևերի ներդրում,
- տարածաշրջանային արժույթի փոխարժեքի ընդհանուր ռեժիմի հաստատում և միության շրջանակներում արժույթային սահմանափակումների բացակայություն,

- տարածաշրջանային պահուստային արժույթի թողարկում իրականացնող, միության մասնակից երկրների միասնական դրամավարկային քաղաքականություն վարող, ինչպես նաև տարածաշրջանային արժույթային համակարգի երկրների տարածքում արժույթային կարգավորման և արժույթային հսկողության գործառույթներ իրականացնող տարածաշրջանային կենտրոնական բանկի ստեղծում [Борисов, 171-172]:

Որոշ տնտեսագետներ արժույթային միության արդյունավետ գործունեությունը պայմանավորում են դրա մասնակից երկրների դրամավարկային քաղաքականության կոորդինացմամբ: Այսպես, համաձայն Ք. դե Վենսեյի՝ արժույթային միությունը համաձայնագիր է, որի շրջանակներում երկու կամ ավելի երկրներ պայմանավորվում են իրականացնել արժույթային քաղաքականության համատեղ կառավարում [de Vanssay, 4]: Այս համատեքստում արժույթային միության բնորոշ առանձնահատկություններից են արժույթային փոխարժեքների մշտական ֆիքսումը, որի տրամաբանական (սակայն ոչ պարտադիր) ավարտը միասնական արժույթի ներդրումն է, ինչպես նաև զարգացած ինստիտուցիոնալ ենթակառուցվածքի և միության միասնական կենտրոնական բանկի առկայությունը: Արժույթային միությունը՝ որպես տարածաշրջանային արժույթային ինտեգրման ձև, կարող է զարգանալ ինտեգրացիոն խմբավորման մասնակից երկրների ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ պայմանագրերի հիման վրա: Արժույթային միությունը թույլ է տալիս խուսափել անդամ երկրների արժույթների փոխարժեքային տատանումներից և ստեղծել պայմաններ փոխադարձ առևտրի և ներդրումների համար: Արժույթային միության ձևավորումը նպաստում է նաև գլոբալ

ֆինանսական կայունության ապահովման հիմնախնդիրների լուծմանը: Ավելի քիչ քանակությամբ արժույթների դեպքում միջազգային ֆինանսական համակարգը պարզեցվում է՝ դառնալով ավելի կայուն: Մյուս կողմից, սակայն, արժույթային միության մասնակիցները չեն կարող իրականացնել անկախ դրամավարկային քաղաքականություն, իսկ ազգային արժույթի դուրսբերման հետ մեկտեղ կորցնում են նաև փոխարժեքը որպես տնտեսական ճգնաժամերին դիմակայելու համար բուֆեր օգտագործելու հնարավորությունը: Դա նշանակում է, որ արժույթային միության անդամ երկրներում արժույթաֆինանսական ցնցումները կարող են ունենալ տարբեր մասշտաբի և բնույթի հետևանքներ, սակայն երկրները ստիպված կլինեն ճգնաժամերի հակազդման դեպքում կիրառել միևնույն միջոցառումները [Булатова, Марена, 124]:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ արժույթային միության ձևավորման համար երկրները պետք է ապահովեն տնտեսական մի շարք նախադրյալներ, այդ թվում՝ կայուն արժույթային փոխարժեք, գնաճի ցածր տեմպեր, պետական բյուջեի պակասուրդի և պետական պարտքի չափավոր մակարդակներ, տոկոսադրույքների նմանություն և այլն՝ հետագայում առաջացող տնտեսական դժվարությունները հեշտությամբ հաղթահարելու նպատակով, քանի որ արժույթային միությանն անդամակցումը հանգեցնում է արժույթաֆինանսական անկախության կորստին, ինչը էապես կրճատում է արժույթային փոխարժեքի միակողմանի կարգավորումների միջոցով երկրի՝ ֆինանսատնտեսական ճգնաժամից դուրս գալու հնարավորությունները:

Փ. Ալլենի դիտարկմամբ, արժույթային միությունը պետք է համապատասխանի նվազագույնը հետևյալ երեք պահանջներին.

- արժութային միությունում պետք է լինի միասնական արժույթ: Իսկ եթե միությունում առկա են մի քանի արժույթներ, ապա դրանք միմյանց նկատմամբ պետք է լինեն ամբողջովին փոխարկելի՝ անփոփոխ ֆիքսված փոխարժեքներով՝ փաստացի արդյունավետորեն ձևավորելով միասնական արժույթ,

- քանի որ ֆիքսված փոխարժեքների կայունությունը կախված է միության շրջանակներում փոխհամաձայնեցված արժութային քաղաքականությունից, ապա պետք է լինի պայմանավորվածություն առ այն, որ միության արժութային քաղաքականությունը, ներառյալ՝ փողի նկատմամբ վերահսկողությունը և բանկերի՝ փող թողարկելու հնարավորության վրա ազդելու կարգավորումը իրականացվեն միության մակարդակով՝ արժութային քաղաքականությունից բացառելով ազգային ինքնավարությունը,

- քանի որ միության և արտաքին արժույթների միջև կարող է սահմանվել միայն մեկ փոխարժեք, ապա պետք է լինի միասնական արտաքին փոխարժեքային քաղաքականություն, և այդ նպատակով ազգային իշխանությունները պետք է հրաժարվեն իրենց միջազգային պահուստների նկատմամբ անհատական վերահսկողությունից՝ այն փոխանցելով միությանը [Allen, 4-5]:

Աշխարհում գոյություն ունեն արժութային միությունների տարբեր ձևեր, որոնք միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման և համաշխարհային տնտեսության կանյուկտուրայի փոփոխությունների ազդեցությամբ ունեցել են կարգավորումների տարբեր մակարդակներ: Այսպես, ըստ Մ. Բորդոյի և Լ. Ջոնանգի՝ արժութային միությունները հանդես են գալիս երկու ձևով՝ *ազգային* և *միջազգային*: *Ազգային արժութային միությունում* քաղաքական և դրամավարկային ինքնիշխանությունը կենտրոնացած է ազգային պետության ձեռքում [Herzog, 40]: Այս

դեպքում ազգային սահմանները համընկնում են արժութային միության գործունեության սահմանների հետ, և միության կարգավորող մարմինը, միակ էմիսիոն կենտրոնն ու վերջին առյուծի վարկատուն հանդիսանում է կենտրոնական բանկը: Որպես կանոն, նման արժութային միությունների ձևավորումն ուղեկցվում է նախկինում ինքնուրույն գործող միավորների (իշխանություններ, նահանգներ, տարածքներ և այլն)՝ մեկ միասնական պետության մեջ քաղաքական միավորմամբ, իսկ տնտեսապես առավել ուժեղ մասնակցի արժույթը հաստատվում է որպես ամբողջ միության ազգային արժույթ: Քաղաքական միասնության շնորհիվ ազգային դրամական միություններն ավելի կայուն և դիմացկուն են, սակայն այդ միասնության խարխիլման դեպքում ընդհանուր արժույթը դադարում է գործել՝ հանգեցնելով արժութային միության քայքայմանը: Ներկայումս ազգային արժութային միության օրինակ է հանդիսանում բրիտանական արժութային միությունը, որը ներառում է Անգլիան, Շոտլանդիան, Ուելսը և Հյուսիսային Իռլանդիան: Շոտլանդիայում Bank of Scotland-ը, Royal Bank of Scotland և Clydesdale Bank-ը Բրիտանական գանձապետարանի անունից շարունակում են ֆունտ ստերլինգի էմիսիան, իսկ Հյուսիսային Իռլանդիայում Bank of Ireland-ը, First Trust Bank-ը, Danske Bank-ը և Ulster Bank-ը տեղական տնտեսական կարիքների համար թողարկում են ֆունտ ստերլինգ, որն ամբողջությամբ փոխարինելի է Անգլիայի բանկի թղթադրամներով: Նման կերպ ԱՄՆ-ում 12 ֆեդերալ ռեզերվային բանկերից յուրաքանչյուրը թողարկում է ԱՄՆ դոլար, որը որպես օրինական վճարային միջոց՝ շրջանառվում է նաև մնացած նահանգներում [Bordo, Jonung, 6]:

Ըստ Բ. դե Վենսեյի՝ *միջազգային արժութային միությունների* գործունեության ընդհանուր նվազագույն պայմաններն են՝ հաշ-

վարկային միավորի գործառույթ կատարող ընդհանուր արժույթի առկայությունը՝ մասնակից երկրների ազգային դրամական միավորների պահպանմամբ, դրամավարկային քաղաքականության միջպետական կոորդինացումը և միության արժույթի նկատմամբ ազգային արժույթների փոխարժեքի ֆիքսումը [de Vanssay, 5]: Նշված պայմանների համադրությունը կարող է առաջացնել տարբերություններ արժույթային միությունների ինստիտուցիոնալ մեխանիզմներում՝ հանգեցնելով այդ միությունների տարբեր ձևերի ի հայտ գալուն: Մասնակից պետությունների սուբյեկտային կազմի տեսանկյունից, միջազգային արժույթային միությունները կարող են լինել *բազմազգ* (Լատինական, Սկանդինավյան արժույթային միություններ) և *երկազգային* (Բելգիա-Լյուքսեմբուրյան, Շվեյցարիա-Լիխտենշտեյն, Ֆրանսիա-Մոնակո արժույթային միություններ) [Bordo, Jonung, 20]: Միջազգային արժույթային միության զարգացման վերջնական փուլում, ինչպես ազգային արժույթային միության դեպքում, սովորաբար ներմուծվում է ընդհանուր արժույթ: Սակայն շատ դեպքերում միջազգային արժույթային միությունը չի ունենում արժույթային կարգավորման միասնական կառույց: Այդպիսի պատմական օրինակ է հանդիսանում 1873թ. ձևավորված Սկանդինավյան արժույթային միությունը, որն ուներ միասնական արժեչափ (սկանդինավյան կրոն), սակայն միության անդամ բոլոր երկրները (Շվեդիա, Դանիա և Նորվեգիա) շարունակում էին պահպանել իրենց կենտրոնական բանկերը, որոնք թողարկում էին սեփական կրոնը, որոնք ազատորեն շրջանառվում էին միության երկրներում: Մեկ այլ օրինակ է 1865թ. ստեղծված Լատինական արժույթային միությունը, որը հիմնված էր երկմետաղ դրամական ստանդարտի վրա, և որի մասնակիցները (հիմնադիրներ՝ Ֆրանսիա, Բելգիա, Իտա-

լիա, Շվեյցարիա) օգտագործում էին ֆրանսիական ֆրանկը որպես ընդհանուր արժեչափ և հատում էին նույն քաշի արծաթյա մետաղադրամներ [Bordo, Jonung 6]:

Ըստ մասնակից երկրների միջև եկամուտների (ծախսերի) բաշխման չափանիշի՝ արժույթային միությունները լինում են *ասիմետրիկ* և *սիմետրիկ*: *Ասիմետրիկ արժույթային միության* առանձնահատկություններից են թույլ ազգային արժույթի փոխարինումն առավել ուժեղ գործընկեր երկրի արժույթով և, որպես հետևանք, սեփական էմիսիոն ինստիտուտի և դրամավարկային համակարգի կառավարմանը մասնակցելու հնարավորության բացակայությունը: *Ասիմետրիկ* միությունները՝ որպես ոչ իրավահավասար արժույթային միություններ, մի կողմից, առավելություններ են տալիս ընդհանուր արժույթ թողարկող երկրին՝ սենյորատը վերաբաշխելով վերջինիս օգտին, իսկ մյուս կողմից, մեծացնում են նրա ծախսերը՝ կապված ամբողջ արժույթային միության կայունության պահպանման հետ: *Սիմետրիկ արժույթային միությունում* ձևավորվում է միջպետական կամ վերպետական ինստիտուտ, որը գործում է՝ ելնելով մասնակից բոլոր երկրների շահերից՝ սենյորատը պետությունների միջև բաշխելով հավասարաչափ, իսկ անդամ բոլոր պետությունները կառավարչական որոշումների կայացմանը մասնակցում են կոլեգիալ ներկայացուցչության և քվեարկության միջոցով (եվրոյի գոտի, Արևելյան-Կարիբյան դրամական միություն, Հարավ-Աֆրիկյան ռենդի գոտի) [Воронина, 67]:

Միջպետական արժույթային միությունների մասին համաձայնագրերը կարող են տարբերվել՝ կախված *ընդհանուր արժույթի կարգավիճակից, կենտրոնական բանկերի դերից և միության անդամների միջև տնտեսական և քաղաքական ինտեգրման մակարդակից* [de Vanssay, 5-7]:

Ընդհանուր արժույթի կարգավիճակից կախված՝ տարբերում են արժույթային միության հետևյալ ձևերը.

1. *հավաքական արժույթային միավոր ունեցող արժույթային միություն* (օրինակ՝ էքյուն՝ Եվրոպական արժույթային համակարգում, եվրոն՝ եվրոյի գոտում): Քաղաքական տեսանկյունից, հավաքական արժույթի ներդրումն ավելի նախընտրելի է, քանի որ տվյալ արժույթային միավորի գործունեության մեխանիզմները մշակվում են ինտեգրման գործընթացի բոլոր մասնակիցների կողմից, և յուրաքանչյուր մասնակից հնարավորություն է ստանում ազդել ընդունվող որոշումների վրա՝ սեփական շահերը պաշտպանելու նպատակով [Янишевская, 52],

2. *մասնակից երկրներից որևէ մեկի ազգային արժույթի վրա հիմնված արժույթային միություն* (օրինակ՝ Շվեդարիան և Լիխտենշտեյնը օգտագործում են շվեդարական ֆրանկը, իսկ շվեդարական կենտրոնական բանկը կոորդինացում է ընդհանուր դրամավարկային քաղաքականությունը, ԱՊՀ երկրները 1992-1994թթ. ընթացքում օգտագործում էին ռուսական ռուբլին (ռուսական ռուբլու գոտի)),

3. *որպես օրինական վճարային միջոց՝ մի քանի ազգային արժույթների օգտագործման վրա հիմնված արժույթային միություն* (մինչև եվրոյի ներմուծումը Բելգիայում և Լյուքսեմբուրգում շրջանառվում էր երկու ազգային արժույթ՝ 1:1 հարաբերակցությամբ արժույթային փոխարժեքի ֆիքսմամբ, և երկու արժույթներն էլ թե՛ Բելգիայում, և թե՛ Լյուքսեմբուրգում հանդիսանում էին օրինական վճարային միջոց):

Ըստ դրամային իշխանությունների կենտրոնացման և կենտրոնական բանկի դերի՝ միջազգային արժույթային միությունները կարող են հանդես գալ երկու ձևով.

1. *կենտրոնացված արժույթային միություններ*, որոնք, իրենց հերթին, լինում են երկու տեսակ.

ա. *վերազգային կենտրոնական բանկ ունեցող արժույթային միություններ* (օրինակ՝ եվրոյի գոտին, որտեղ Եվրոպական կենտրոնական բանկն իրականացնում է վերահսկողություն եվրոյի շրջանառության, իրականացվող արժույթային գործարքների, միության անդամ երկրների արժույթային պահուստների ձևավորման և կառավարման նկատմամբ),

բ. *մեկ ազգային կենտրոնական բանկ ունեցող արժույթային միություններ* (օրինակ՝ Շվեդարիայի Ազգային բանկը դրամավարկային քաղաքականություն է իրականացնում և՛ Շվեդարիայում, և՛ Լիշտենշտեյնում, իսկ վերջինում բանկային համակարգը և օրենսդրությունը հարմարեցված են շվեդարական նորմերին):

2. *ապակենտրոնացված արժույթային միություններ*, որոնք ևս ունեն երկու տարատեսակ.

ա. *մի քանի միջպետական կենտրոնական բանկեր ունեցող արժույթային միություններ* (օրինակ՝ CFA ֆրանկի գոտում գործում է երկու միջպետական կենտրոնական բանկ՝ Արևմտյան Աֆրիկայի պետությունների կենտրոնական բանկ և Կենտրոնական Աֆրիկայի պետությունների կենտրոնական բանկ, որոնք համագործակցում են դրամավարկային ոլորտում),

բ. *մի քանի անկախ ազգային (կենտրոնական) բանկեր ունեցող արժույթային միություններ* (Ավստրո-գերմանական, Լատինական և Սկանդինավյան արժույթային միություններ):

Արժույթային միությունը, որպես կանոն, հանդիսանում է տնտեսական ինտեգրման և քաղաքական միության խորացման ասպեկտներից մեկը, որի ձևավորման տնտեսական պատճառները կապված են առևտրային գոր-

ծարքներում մասնակից երկրների տրանսակցիոն ծախքերի կրճատմամբ պայմանավորված առավելությունների (գների ուղղակի համեմատություն, արժույթային ռիսկի և դրա ապահովագրության ծախսերի կրճատում), ինչպես նաև արժույթային փոխարժեքի ֆիքսման շնորհիվ ներքին գների կայունության ապահովման հետ: Ստանդարտացնելով արժույթային փոխարժեքների տատանման սահմանները, միության շրջանակներում էմիսիայի ծավալները՝ պետությունները մեծացնում են փողի օգտակարությունը՝ խթանելով տնտեսական աճը, արտաքին առևտրի զարգացումը և կապիտալի շարժը: Արժույթային միության ձևավորման ոչ տնտեսական պատճառների շարքում հատկանշական է առանձին պետությունների նկատմամբ քաղաքական ազդեցության ամրապնդման ու ընդլայնման ձգտումը, որը վերաբերում է հատկապես ասիմետրիկ արժույթային միություններին: Լրացուցիչ խթան են հանդիսանում նաև սոցիալ-մշակութային գործոնները՝ ընդհանուր պատմությունը, լեզուն, մշակույթը, կրոնը, որոնք բնորոշ են հիմնականում բազմազգ արժույթային միություններին [Воронина, 68]:

Արժույթային միության ստեղծման գործում շահագրգռված են հատկապես համաշխարհային գերտերությունները, քանի որ այն ենթադրում է համակարգված շահեր, քաղաքական միավորում և բանկային համակարգի թափանցիկություն, ինչպես նաև ամրապնդում է տնտեսական բլոկների բանակցային ուժը: Միասնական արժույթը նպաստում է ներտարածաշրջանային առևտրի, արտադրության բազմազանեցման և արտադրության գործոնների շարժի աճին՝ հանգեցնելով մասշտաբի էֆեկտի մեծացմանը: Միասնական արժույթի թողարկումը խթանում է նաև բանկային և ֆինանսական ծառայությունների ոլորտում տարածաշրջանային մրցակցությանը՝ ապահովելով մատուցվող ծառայություն-

ների բազմազանեցման և որակի աճ: Արժույթային միությունը, ընդհանուր առմամբ, օղակ է հանդիսանում տնտեսական ինտեգրման ողջ շղթայում [Eissa, 17-18, 20]: Արժույթային միությանը միանալը նպաստում է ֆինանսական ինտեգրմանը նաև այն պատճառով, որ այն թույլ չի տալիս կառավարություններին փոխարժեքի իջեցումը օգտագործել արտասահմանյան ներդրողներին սեփականազրկելու և դուրս մղելու համար [Fornaro,4]:

Արժույթային միությունը տարբերվում է ֆիքսված փոխարժեքի այնպիսի համակարգերից, ինչպիսիք են դոլարայնացումը և արժույթային խորհուրդը, քանի որ դոլարայնացման դեպքում պետությունը ազգային արժույթի փոխարեն որպես օրինական վճարային միջոց ներմուծում է այլ երկրի (սովորաբար միջազգայնորեն առաջատար) ազգային արժույթը, իսկ արժույթային խորհրդի դեպքում երկիրն իր ազգային արժույթը կապակցում է միջազգայնորեն ուժեղ այլ արժույթի հետ՝ երաշխավորելով պահուստների ամբողջական ծածկույթ, ինչը ենթադրում է, որ յուրաքանչյուր ազգային արժույթի միավորի թողարկման դեպքում տվյալ երկիրը պետք է միջազգային պահուստներում ապահովի նույն քանակությամբ կապակցված միջազգային արժույթ՝ բարձր գնաճը զսպելու նպատակով: Ի տարբերություն դոլարայնացման և արժույթային խորհուրդների, որոնք հիմնված են միջազգային առաջատար արժույթն ընդունող երկրի միակողմանի պարտավորության վրա՝ արժույթային միության հիմքում ընկած է մասնակից բոլոր երկրների համատեղ պարտավորությունը [Ögren, 2]:

Ըստ Թ. Բայումիի՝ արժույթային միության ընտրությունը կախված է դրա հիմքում ընկած անհամապատասխանությունների չափից, դրանց միջև կոռելացիայից, արտարժույթային գործարքների ծախսերից, երկրների միջև արտադրության գործոնների շարժունակու-

թյունից և տարբեր ապրանքների նկատմամբ պահանջարկի միջև փոխհարաբերակցությունից [Bayoumi, 537]:

Տնտեսագիտական գրականության մեջ շատ հաճախ է հանդիպում նաև «արժույթային խմբավորում» եզրույթը, որը երբեմն նույնացվում է «արժույթային միություն» եզրույթի հետ, մինչդեռ «արժույթային խմբավորում» հասկացության ներքո նկատի է առնվում ոչ թե նոր արժույթի ներմուծում, այլ դրամական միավորների ֆիքսված փոխարժեքի ապահովում, մասնակից երկրների արժույթաֆինանսական կառավարման ազգային մարմինների փոխազդեցության կանոնակարգում [Акельев, Ермушко, 10]:

Չնայած նրան, որ և՛ արժույթային գոտու, և՛ արժույթային միության դեպքում առկա է ինտեգրացիոն խմբավորման ողջ տարածքում արժույթային քաղաքականության միավորման որոշակի մակարդակ, այնուամենայնիվ, արժույթային միությունը ենթադրում է արժույթային քաղաքականության սահմանման գործում անդամ երկրների ավելի մեծ իրավահավասարություն՝ ի տարբերություն արժույթային գոտու, որտեղ վճռորոշ դերը պատկանում է մեկ երկրի արժույթին, որն արժույթային գոտու ողջ տարածքում արժույթաֆինանսական ռեժիմը որոշելու հարցում ունի գերիշխանություն [Фрайндт, 108]:

Հաշվի առնելով արժույթային ինտեգրման համաշխարհային փորձը՝ ներկայումս առանձնացվում են արժույթաֆինանսական հարաբերությունների ոլորտում երկրների միջև փոխգործակցության հետևյալ մոդելները.

1. *արևմտաեվրոպական մոդել*, որը հիմնված է տնտեսական միության վրա՝ միասնական արժույթի հետագա ներդրմամբ և արժույթաֆինանսական ինտեգրման գործընթացներում անդամ բոլոր երկրների հավասար մասնակցությամբ,

2. *լատինաամերիկյան մոդել*, որն իրենից ներկայացնում է միասնական արժույթաֆինանսական տարածք՝ հիմնված միջազգային հաշվարկների իրականացման ժամանակ օգտագործվող առավել ուժեղ արժույթի նկատմամբ ազգային դրամական միավորների կապակցման վրա, կամ էլ արժույթային ոլորտում ինքնիշխանությունից ամբողջական հրաժարում, այսինքն՝ ներքին շրջանառությունից ազգային արժույթների դուրս մղում,

3. *աֆրիկյան մոդել*, որը ենթադրում է արժույթային միության ստեղծում՝ հիմնված երրորդ երկրների կայուն արժույթի նկատմամբ արտաքին առևտրային գործարքներում օգտագործվող հաշվարկային դրամական միավորի կապակցման վրա,

4. վերոնշյալ մոդելների առանձին տարրերի համակցմամբ ինտեգրացիոն փոխգործակցության *համախմբված մոդել*, ընդ որում, եթե կայուն արժույթաֆինանսական կապերի վրա հիմնված արևմտաեվրոպական մոդելը կարող է կիրառվել առավելապես տնտեսապես զարգացած երկրների կողմից, ապա լատինաամերիկյան և աֆրիկյան մոդելների տարրերը (օրինակ՝ վճրահաշվարկային համակարգի ձևավորում, ազգային արժույթների փոխարժեքների ֆիքսում փոխարկելի դրամական միավորների նկատմամբ) կիրառելի են թե՛ զարգացող, և թե՛ անցումային տնտեսությամբ երկրների դեպքում [Петрукович, 466]:

Այնուամենայնիվ, ինտեգրացիոն խմբավորման շրջանակներում միասնական արժույթի ստեղծումն ուղղված է տարածաշրջանի տնտեսության արդյունավետության բարձրացմանը և, որպես հետևանք, կայուն տնտեսական աճի ապահովմանը: Միասնական արժույթի օգտագործումը լրացուցիչ խթան է հանդիսանում ազգային տնտեսությունների ինտեգրացիոն միավորման անդամ երկրների արտաքին շուկաների հետ կապված ճյուղերի



զարգացման համար: Նույնիսկ միջազգային հաշվարկային միավորի ձևով հանդես եկող հավաքական արժույթների (օրինակ՝ քլիրինգային միավորների) օգտագործումը թույլ է տալիս գործընկեր երկրների միջև առևտրի իրականացման ժամանակ տնտեսել արժութային պահուստները՝ խթանելով արտաքին առևտրային հարաբերությունները [Мискин, 75]:

**Եզրակացություն**

Այսպիսով, հարկ է նշել, որ արժութային միության ձևավորումը չի կարող լինել պարզապես միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման միտումներից հետ չմնալու ինքնանպատակ գործընթաց: Այն պետք է բխի տարածաշրջանային տնտեսական ընդհանուր շահերի, կայուն և զարգացած միջպետական կապերի առկայությունից, այդ փուլին անցում կատարելու երկրների պատրաստվածության բարձր աստիճանից, որի համար անհրաժեշտ է.

- միջազգային փորձի և ինտեգրվող երկրների տնտեսությունների զարգացման օբյեկտիվ իրողությունների վրա հիմնված ինտեգրացիոն մեխանիզմների ձևավորում և ներդրում,
- արժութային միության ստեղծման և միասնական արժույթի ներմուծման սկզբունքների և պայմանների հաստատում,
- տնտեսական կոնվերգենցիաների չափանիշների և դրանց պահպանման

շրջանակների, ինչպես նաև դրանք ապահովելու համար անհրաժեշտ քայլերի մշակում,

- մասնակից երկրների դրամավարկային և հարկաբյուջետային համակարգերի ներդաշնակեցման բարձր մակարդակի ապահովում,
- արժութային միության կայունությունը պահպանելու համար անհրաժեշտ մասնակից երկրների ֆինանսական կարգապահության ապահովման մեխանիզմների ձևավորում:

Ներկայումս աշխարհում գործող ոչ բոլոր ինտեգրացիոն խմբավորումներն են պատրաստ արժութային միություն ձևավորելուն, մի կողմից՝ վերջիններիս ցածր արդյունավետության, տնտեսական հիմնավորման բացակայության, մյուս կողմից՝ անկախ արժութային քաղաքականություն իրականացնելու հնարավորությունից երկրների հրաժարվելու պատճառով: Արդյունքում արժութային միություն ձևավորելու բազմաթիվ փորձեր ձախողվում են, իսկ արդեն իսկ սկսած նման գործընթացները ավարտին չեն հասնում: Այնուամենայնիվ, պետք է ընդգծել, որ արժութային միությունների ձևավորումը պահանջում է մասնակից երկրների տնտեսական համակարգերի շուկայական զարգացմանն ուղղված մեծ ջանքեր, արտադրության գործոնների տեղաշարժի ազատականացում՝ մաքսային միության և ընդհանուր շուկայի արդյունավետ գործունեության ապահովմամբ:

**Գրականության ցանկ**

1. Allen P.R. “Organization and Administration of a Monetary Union”. Princeton studies in international finance; no. 38. Princeton, New Jersey, Princeton University Press, 1976, p. 89
2. Bayoumi T. “A Formal Model of Optimum Currency Areas” IMF Staff Papers, 1994, vol. 41, No 4, pp. 537-554
3. Bordo M.D., Jonung L. “The future of EMU: What does the History of Monetary Unions tell us?” NBER working paper series, Cambridge, September 1999, Working Paper 7365, p. 42

4. de Vanssay X. “Monetary Unions in Historical and Comparative Perspective”. Journal for Institutional Innovation, Development and Transition. 2000, Vol. 4, p. 24
5. Eissa N.A.M. “Economic Monetary Unions in Economic Blocs”. Faculty of Economics and Political Science FEPS, Future University in Egypt, January 2020, p. 25
6. Fornaro L. “Monetary union and financial integration”. Economics Working Paper Series, Working Paper No. 1677, December 2019, p. 32
7. Herzog B. “Fiscal-Monetary Interaction and the Stability and Growth Pact in the European Monetary Union”. A thesis submitted for the degree of Doctor rerum politicarum, Department of Economics and Social Science, University of Bamberg, April 30, 2005, p. 265
8. Ögren A. “Currency Unions”. Lund Papers in Economic History, No. 204, General Issues. Lund University, Department of Economic History, 2019, p. 33
9. Tavlas G.S. “The Theory of Optimum Currency Areas Revisited”. IMF, Finance & Development. June 1993, Vol. 0030: Issue 002, 1993, p. 32
10. Акельев Е.С., Ермушко Ж.А. “Формирование валютных союзов: плюсы и минусы” Вестник ТГПУ (TSPU Bulletin), 2011, 12 (114), сс. 9-13
11. Борисов А.Н. “Валютная интеграция как одна из основных тенденций развития мировой валютной системы на современном этапе”. Экономические науки, 2012. 7(92), сс. 171-179
12. Булатова Е.В., Марена Т.В. “Эволюция и современные формы развития процессов региональной валютной интеграции”. Buletinul Științific al Universității de Stat „Bogdan Petriceicu Hasdeu” din Cahul. 2011, N 2(6), сс. 116-127
13. Воронина Т.В. “Валютные союзы прошлого и настоящего: опыт и уроки для Евразийской интеграции”. Научная мысль Кавказа, 2014, N 3, сс. 66-75
14. Мискин А.С. “Современные тенденции развития единых валют” Известия Томского политехнического университета. Инжиниринг георесурсов, 2008, T 312, N 6, сс. 71-75
15. Петрукович Н.Г. “К вопросу классификации процессов валютно-финансовой интеграции” Молодой ученый, 2014, N 6 (65), сс. 465-468
16. Слипченко М.Н. “Формирование валютного союза стран СНГ в условиях трансформации мировой валютной системы”: автореф. дис. канд. экон. наук; Волгоградский государственный университет. Волгоград, 2006, с. 23
17. Фрайндт И.Е. “Формы валютной интеграции” Вестник Омского университета, Серия «Экономика», 2005, № 1, сс. 105-108
18. Янишевская Я.А. “Теоретические основы единой валюты и причины возникновения валютных союзов в современном мире”. Право и управление, 2021. N 2, сс. 52-59

## **THE CONCEPTUAL FOUNDATIONS OF THE FORMATION OF CURRENCY UNIONS**

**Misak Avagyan**

*PhD in Economics, Associate Professor*

*EUA, Chair of Management*

*misakav@rambler.ru*

### **Abstract**

*The current trends of internationalization, which lead to the activation of the processes of globalization and regional integration, stimulate the growth of the openness and global competitiveness of the economies of both developed and developing countries. As a result, the economic relations between the countries develop at a greater dynamic rate, contributing to the further deepening of the regional economic integration between the countries, up to the transition to the the highest stage - the monetary integration, one of the manifestations of which is the currency union. Taking into account the important role and influence of*

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

---

*monetary integration between countries in international monetary and financial relations, especially currency unions, on the development of the world economy and the increase in the level of international competitiveness of the participating countries, the article presents the main features of their formation, forms of manifestation, prerequisites and influence on the economic development of countries. The main conditions necessary for the creation of monetary unions have been put forward.*

**Keywords:** monetary integration, currency union, foreign exchange rate, single currency, monetary and financial relations, monetary independence.

Ներկայացվել է՝ 11.10.2022թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 14.11.2022թ.